

ԶՈՔԱՆՉԻՄ ՀԱՍՏՐ

Ֆրանչիացի վիպասան Թրիստան Բերնարը մի օր երկու մեծ կարկանդակ էր տանում: Նա հանդիպում է իր բարեկամներից մեկին, որը զարմացած քացագանչում է:

- Ահ, սիրելի Բերնար, զգիտեի, որ այդքան շատ ես կարկանդակ սիրում:
- Միավում ես, բարեկամս, պատասխանում է վիպասանը: Այս երկու մեծ կարկանդակները ինձ համար չեն. զորանջիս եմ տանում: Պատմեմ, թե ինչու: Անցյալ օրը նրա հետ խանութի առջևից էի անցնում: Այսպիսի խոշոր կարկանդակներ տեսնելով նա ամսիջապես քացագանչեց.
- Ահ, եթե երբեք այս կարկանդակներից մեկն ինձ նվիրեին, կյանքիս կեսը կտայի:
- Հիմա հասկան՞ո՞ւմ ես, թե ինչու երկու հատ եմ նվիրելու նրան: Եթե միայն իմանար, թե որքան եմ սիրում նրան:

ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆԸ

Անգլիացի հոչակավոր վիպասան Քոնան Դոյլ գալիս է Հռոմ: Հյուրանոցի ճանապարհին վարձակառքի վարորդը, նայելով առջևի փոքրիկ հայելուն, ինքնավստահ ձևով ասում է:

- Բարի գալուստ, պարոն Քոնան Դոյլ:
- Այդ ինչպե՞ս զիտեք իմ ով լինելն ու իմ անունը, պարոն:
- Մի քիչ տրամարանելով: Դոյլ Հռոմի կայարանը հասար Փա-դր-Քալեյի շոգեկառորդը, հազնում եք իսկական անգլիացու հագուստներ ու ծխում եք ծխամործ անգլիացու նման: Իտալերեն քիչ եք խոսում, այն էլ անգլիացու արտասանությամբ: Ձեր գրպանից երևում է ոստիկանական մի գրքի ծայրը, որը ես էլ եմ կարդացել և որն այստեղ մեծ հաջողություն ունի:
- Ուրիշ ինչի՞ց է երևում իմ ով լինելը:
- Զեր ծախս երեսը աջի պես լավ ածիլված չէ. ուրեմն առավոտյան ձեր դեմքը լուսավորված էր աջից և դուք աջլիկ եք:
- Զարմանալի է, - մրմնջում է վիպասանը երեսը շփելով: - Բայց ինչպե՞ս զիտեք, որ ես՝ ես եմ:
- Միայն ձեր անունից ու ազգանունից, պարոն Քոնան Դոյլ, ես դրանք կարդացի ձեր պայտուսակները կառքի մեջ դնելու ժամանակ:

ԻՍԿՈՒՅՑՆ

Մի ժամ հարուստ ճաշի է հրավիրում աշխարհահռչակ դերասան Չառլի Չապլինին: Վերջինս շատ դժգոհ է մնում աղքատիկ ու անհամ կերակուրից, բայց ոչինչ չի ասում ու կես կուշտ, կես սոված վեր է կենում սեղանից: Մեկնելու ժամանակ տաճտերը և տաճտիրուիին հարցնում են նրան:

- Պարոն Չապլին, շատ ենք ուզում, որ ուրիշ անգամ էլ մեզ պատիվ անեք ու մեզ մոտ գաք ճաշելու: Ե՞րբ կցանկանայիք կրկին մեր հյուրը լինել:
- Իսկույցն, եթե կարելի է, - պատասխանում է Չապլինը ժպտալով:

ԳՈՒՇԱԿՈՒՄ Է

Հայրը հարցնում է Աշոտին.

- Ուստիշդ գուշակո՞ւմ է, որ ես եմ քեզ օգնում շարադրություններդ գրելու համար:
- Կարծում եմ, որ գուշակում է, հայրիկ, որովհետև զարմացած նայում է ինձ ու ասում է. ``Դու մենակ այսքան շատ սխալներ չեր անի, առաջ ավելի քիչ սխալներ էիր անում'':